

Մ. Լ. ԱՊԱՆԱԼՅԱՆ

Թ Ե Ո Ղ Ի Կ

(1873—1928 pp.)

Իր անվան շուրջ

Նրա անունը Թեոդոս էր և ոչ Թադևոս կամ Թեոդորոս, ինչպես վերջին ժամանակներս հորեմն շփոթում են մեղանում լույս տեսած մի քանի ուսումնասիրությունների հեղինակները, մեջբերելով կամ ծանոթագրելով նրա աշխատությունները։ Թեոդոս նրան կնքել էին օրթոդոքս կրոնին հարող իր նեկտար և Գրիգոր Լարճինճյան ծնողները (զաղթած Երզնկայից), որ բնակություն էին հաստատել Կ. Պոլսի Սկյութար թաղամասում, ուր և ծնվել է Թեոդիկը՝ 1873 թ. մարտի 5-ին, Վանքի բաղի մեծ հրդեհի օրերին։ Հրդեհին կուլ էին գնացել Թեոդիկի ծնողների բնակարանը, կահ-կարասին, և փոքրիկը աշխարհ եկավ այդ մոխրակույտի վրա խփված վրանի տակ։ Չքաղոր կյանքի բոլոր զրկանքները կրած տղան աճում էր, սակայն, բարոյական լավագույն հատկանիշներով, իսկ ուսումնատենչ ծնողները ոչինչ չխնայեցին նրան ժամանակի լավագույն մանկավարժների մոտ կրթության տալու։ Թեոդիկը հաճախեց Սկյութարի ճեմարան, Ռ. Կոլիջ և Պերպերյան վարժարան, ուր դրսևորելով արտակարգ աշխատասիրություն և զրական ու բանասիրական հակումներ, իր անվանի ուսուցիչների սիրելին դարձավ խոստումնալից այլ սաների թվում, որոնք էին արևմտահայ ապագա մշակութային գործիչներ՝ Լևոն Բաշալյանը, Վ. Թեքեյանը, Տիրան Չրաքյանը, էդուարդ Գուլանճյանը, Ռուբեն Զիլինկիրյանը և ուրիշներ։ Հարազատների ու դասընկերների շրջանում Թեոդոսի փոխարին նա քնքշալից Թեոդիկ էր, և այդ անունը այնքան սիրելի էր մանեքին, որ այդպես էին կոչում իրեն տարիներ հետո իր ուսուցիչներն ու անվանի բարեկամները, և նա չքաշվեց նույն ձևով ստորագրել իր բազմաթիվ աշխատությունների տակ, որոնք ժողովրդական լայն ճանաչում էին գտնում։



Խորին երախտագիտությամբ հաշտնում ենք, որ Թեոդիկի հազվագյուտ և արժեքավոր լուսանկարը մեզ տրամադրել է Փարիզի «Արաքս» լուսանկարչական ստուդիան, հանձին հարգարժան պր.-ն Գր. Շուլայանի—Հեղինակ։

Իր կյանքի վեցերորդ տասնամյակում անգամ գտնվեցին մարդիկ, որոնք փորձեցին խմբագրել նրա անունը, իբր անհարմար գտնելով իր հանրահռչակ վաստակին: Սակայն պահպանվել է Թեոդիկի ուշագրավ պատասխանը՝ Ստեփան Տերտերյանին այդ առթիվ, որ, խնդիրը մեկընդմիջտ փակելու համար, մեջ ենք բերում ամբողջությամբ:

1926 թ. Նիկողիա, 8 փետրվարի. «...Թեոդիկ անունս նորեն խնդրո նյութ ընել էիք ուղած: Եւ այց նախ ըսեմ, որ շարաշար կսխալիք՝ կարծելով որ ձեր բարեկամական դիտողութենեն առնված ըլլամ: Հետո հարկ կա՞ միշտ կրկնելու թե հանձին ձեր կողջունեմ (ու ողջունած եմ շատոնց) ճշմարիտ և անկեղծ բարեկամ մը՝ որ հոգածու է շահուս և որ կգնահատե միշտ զրշի պարապմանցս օգտակարությունը: Հիմա դանք անունիս: Եղբայր Խնշ ունի կյուզելիմ կոկիկ անունս, զոր կուզեք սրբագրել, իբր նոր կնքահայր, և փոխանակել զայն Թեոդորոսիկ բաղմավանկ հորջորջմամբ մը: Նկատենք պահ մը թե սրեցի զայն, նորեն նոր պետք է հասկցնել արարատ-աշխարհի, թե Թեոդիկ չեմ այլևս, այլ Թեոդորոսիկ: Եվ հետո ո՞վ ըսավ, որ իմ մկրտության անունս Թեոդորոս է (զորավար): Իմ ավագան անունս Թեոդոս է (թագավոր)՝ զոր ատենին զգվականի են վերածել տունիներս, ու այսպես ալ մնացեր ու նվիրականացեր է ան ինձ համար: Արգար Ունճյան եթե զրեինք, ո՞վ պիտի իմանար թե Արիկ Ունճյանը կակնարկենք (նույնը խմբագիր Մուպահյաճյանի համար): Եզիպտոս զավեշտագիր Համբիկյան մը կա (—Ռաուլ Բոնշոն): Ուրեմն ըսենք իրեն, որ Համբարձումյան ընե մականունը: Գալով ձեր այն կարծիքին, թե Թեոդոսը ընդհանրացած չէ Հայոց մեջ, մի՞թե Թեոդորոսն ընդհանրացած է: Եվ ինչու պնդել նույն անունը կրող մեկու մը, որ փոխե զայն: On ne discute pas avec des goûts et des couleurs! (ճաշակի և գույնի շուրջ չեն վիճում):

Միտքս «որիշ անուն մըն ալ ինկավ. ունեցած ենք յանցելումն «Թեոդիկ ճգնավոր» մը: Ի՞նչ կսեք, փոխենք պատմութենեն այս անունն ալ...»¹:

Այսպես ուրեմն, համաձայնենք նրան, որ մնա Թեոդիկ, առավել ևս այն հիմնավոր պատճառով, որ տասնամյակներ շարունակ ժողովուրդն ընտելացել է այդ անվանն այնպես, որ երբեմն տարբերություն չի դնում նրա անվան և հեղինակած աշխատությունների վերնագրերի միջև և հաճախ վերջիններս պարզապես անվանում է Թեոդիկներ:

Մուտք գրանան աշխարհ

Դեռևս պատանի Թեոդիկը գրում էր պատմվածքներ, ակնարկներ ու պատկերներ, որոնք տարբեր գրական կեղծանուններով. «Սողոթն», «Մտոստիկ», «Թեոդիկ», «Թ. Ա.» ստորագրություններով լույս էին տեսնում ժամանակի պոլսահայ պարբերականներում՝ «Մաղիկ», «Մանվումեի էֆքեար», «Ճերիտեի շարդիկ»: Այդ զեղարվեստական ստեղծագործությունները թևակոշվում էին ժամանակին բավական տիրապետող գրական բնապաշտական (նատուրալիզմ) ուղղությամբ, սակայն իրենց թեմատիկայով իսկապես՝ «Կյանքի հատորեն փրցված էջեր» էին, արտացոլում էին արևմտահայ հասա-

¹ Նաժակն առաջին անգամ հրատարակված է «Հայրենի Տարեցույց»-ում, Պետդիվ, 1938 թ. (Ա տարի), խմբ.-ներ՝ Հ. Մարաշյան, Ն. Գառապյան: Տե՛ս էջ 10—12: «Անտիպ նշխար մը տարեցույցներու վարպետն»:

րակ, աշխատավոր ժողովրդի կյանքն ու բարքերը և դիտվում էին իբրև արևմտահայ «ռամկական» կամ «ժողովրդական» գրականության հիմնաքար։ Ուշագրավ է, որ պոլսահայ պարբերականները տպագրելով Թեոդիկի և մյուսների գրական ստեղծագործությունները, հետապնդում էին արևմտահայ ընթերցող լայն շրջանների գրական ճաշակը բարձրացնելու և հայ ինքնուրույն գրականության զարգացման խնդիրները։

Հայ ազգային մտքի և ինքնուրույն գրականության գոյության հաստատմանն էր նվիրված Թեոդիկի կողմից մամուլի էջերում կերտված արևմտահայ վաթսուհից ավելի գրողների ու հրապարակագիրների «Ճանշվոր դեմքեր» գրաքննադատական շարքը, որ գրված լինելով արտակարգ տաղանդով, ճշմարտացի և դիպուկ, գրական հռչակ բերեց ոչ միայն ակնարկների հերոսներին, այլև դիմաշարը կերտող երիտասարդ հրապարակագիրին։ Այդ նույն օրերին էր, որ առթելով մի մեծ անակնկալ, Սիմոն Քիզիրյանը «Ճանշվոր դեմքեր»-ի յոթերորդ տասնյակի մեջ, «Մանգումե»-ում² կերտեց երիտասարդ Թեոդիկի գրական դիմանկարը ոչ պակաս վարպետությամբ ու սրամտությամբ, այդպիսով նրա անունը մեկընդմիջտ մտցնելով արևմտահայ անվանի մտավորականների ոսկե շրջանակը։

Հետագայում իր գրչակից բարեկամներից մեկը՝ երգիծաբան Երվանդ Թուլայանը անդրադառնալով Թեոդիկի ստեղծագործությունների հարուստ թեմատիկային, գրում էր. «Եթե վանքերու ու մենաստաններու մագաղաթներուն սիրահարված բանասեր Թեոդիկին նայիս, բարձրավանք ծնած է, կըսես։ Եթե բնության հրաշագեղ պատկերները նկարելու իր բանաստեղծական նուպաներու հետևիս՝ Չամլճայի կատարը ծնած է, կըսես։ Եթե իշխանական ոսկեհուռ սալոններու շուրջ թափառող իր երևակայությամբ նայիս, մարգարտանո օրօրոցի մեջ ծնած է, կըսես։ Բայց ո՞չ, Թեոդիկ ծնած է... վրանի տակ, որևէ վաշկատուն արտիստի մը պես»³։

Երբ փայլուն գնահատականներով ավարտեց վարժարանը, իրոք վաշկատուն արտիստական կյանքը դիմավորեց նրան, իր բովանդակալից և ծայրահեղ դժվար կողմերով։ Թեոդիկը շարունակում էր ստեղծագործել գիշերները, իսկ ցերեկները վարձվել էր Սելյան վաճառատանն իբրև հաշվետար։ Նրա մեջ շատերը հայ աշխատավոր-գրողների նոր սերնդի նախատիպարը տեսան։

XX դար Թեոդիկը ոտք դրեց բանասիրական լուրջ հետաքրքրություններով։ Նա հավաքում, գրի էր առնում ժողովրդական բառն ու բանը, պոլսահայ բարբառին հատուկ հետաքրքրական ու հազվագյուտ արտահայտությունները։ Հետագայում իր բարեկամների մի խիստ նեղ խումբ օգնում էր նրան դասակարգելու այդ ամենը հսկայածավալ եռահատոր մի աշխատության մեջ, որ կոչվեց «Պոլիսի հայելարը» և 1905 թ. արժանացավ արևմտահայ գրական ամենաբարձր՝ Իզմիրյան առաջին մրցանակին։ 1912 թ. Թեոդիկը հրատարակեց պատմվածքների մի ժողովածու «Կաղանդ» վերնագրով, որ բարձր գնահատվեց ժամանակի գրական մտքի և հատկապես Դանիել Վարուժանի կողմից⁴։ Նույն 1912 թվականին Թեոդիկը հայ գիտության զոհասեղանին դրեց

² «Մանգումեի էֆքեար», Կ. Պոլիս, 1901 (45-րդ տարի), թիվ՝ 190։

³ «Կավուռչին Տարեցույցը», Կ. Պոլիս, 1933։

⁴ Դանիել Վարուժան, Նամականի, Երևան, 1965 թ., «Հայաստան» հրատ., էջ 199—200։ Դ. Վ.-ի նամակը Թեոդիկին, 1912, Եվդոկիա։

«Տիպ ու տառ» կոչվող մի այլ հոյակապ պատմական, մատենագիտական աշխատություն, որ իրապես արժանի էր հայ գրերի գյուտի և հայ տպագրության կրկնակ հորելյանին: «Տիպ ու տառը» մինչև օրս էլ անփոխարինելի մի աշխատություն է հայկական հնագույն տպարանների, գրքերի ու հրատարակիչների մասին:

Հայկական հանրագիտարանին համազոր անուն

1907 թ. իր կնոջ՝ Արշակունհի Թեոդիկի⁵ հետ միասին Թեոդիկը ձեռնարկեց «Ամենուն տարեցույց»-ների պարբերական հրատարակությանը (1907—1929 թթ.): Այդ գաղափարը հուշեց նրանց անձնական հարուստ գրադարանում առկա հայկական հնագույն օրացույցների և տարեցույցների հազվագյուտ հավաքածուն: Ձեռնարկը պատճառաբանվեց բարեգործական, թերևս հրատարակության իրավունք ձեռք բերելու նպատակով: Իրականում Թեոդիկն իր տարեցույցի առջև շատ ավելի մեծ և կարևոր խնդիր էր դնում: Կ. Պոլսում դարասկզբին հայերեն որևէ գրական պարբերական լույս չէր տեսնում: Հայերեն նոր պարբերական հիմնադրելը համիդյան դաժան գրաքննության պայմաններում համարյա անհնարին գործ էր, այնինչ գրական այդպիսի մի հրատարակության կարիքը խիստ զգացվում էր՝ ընթերցող լայն շրջաններին հաղորդակից դարձնելու ինչպես հայ գրողների լավագույն գործերին, այնպես էլ նորերի անտիպ ստեղծագործություններին:

Հնուց հայ ժողովրդի մեջ օրացույցը կամ տոնացույցը լայն տարածում ուներ: Թեոդիկը վճռեց վերակառուցել այն, օրացույցին կամ տոնացույցակին կցել ընդարձակ և արժեքավոր գրական, պատմագիտական հավելված, օրվա հայ հասարակական խնդիրներին արժանի նյութերով, այն դարձնել «կես գրական, կես ժողովրդա-տոմարական»⁶: Սակայն տարեցտարի առավել կատարելագործելով և իր տարեցույցների բովանդակությունը հարստացնելով գրական, պատմական, վավերագրական և վիճակագրական արժեքավոր նյութերով, Թեոդիկը բարձրացրեց դրանք հանրագիտարանի մակարդակի, դարձրեց երկրում և արտասահմանի հայության շրջանում չափազանց ընդունելի և համակրելի մի տարեկան պարբերական, ապահովելով «Ամենուն տարեցույց»-ների հաստատուն տեղը և կարևոր դերը հայ կյանքում: Սկզբունք ունենալով տարեցույցի էջերում հրապարակել միմիայն անտիպներ, Թեոդիկը «Ամենուն տարեցույց»-ներում տեղ էր տալիս ոչ միայն պատմության ու մշակույթի՝ անցյալից ժառանգություն մնացած և առաջին անգամ հրապարակվող մեծարժեք վավերագրերի. հուշեր, նամակներ, հղվածներ կամ գրական-գեղար-

⁵ Արշակունհի Թեոդիկ, արևմտահայ մանկավարժ, հասարակական գործիչ, հրապարակագիր (1875—1922 թթ.), աղջկական աղգանունը՝ Ճեզվեճյան, կրթված Սամաթիայի Նունյան-Վարդուհյան վարժարանում, ապա Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Դասավանդել է Կ. Պոլսի մի շարք վարժարաններում, ակտիվորեն մասնակցել է «Ազգանվեր հայունյաց»-ի գործունեությանը, հիմնադրել է Կ. Պոլսի «Տիկնանց միությունը», աշխատակցել պոլսահայ մամուլին: Մասնակցել է Գ. Լուսինյանի «Ֆրանսահայ բողոքի» պատրաստմանը, 1909-ին հրատարակել է «Ամիս մը ի Կիլիկիա» վավերագրական-հրապարակախոսական երկը, 1912-ին՝ «Արդի բարոյագիտությունը» դասագիրքը, իբրև միջին և բարձր դասընթաց:

⁶ Տե՛ս ԴԱԹ, Վ. Մալեզյանի արխիվ, թղթապանակ № 253, վավ. № 1: Թեոդիկի նամակը Վ. Մ.-ին, 1909, հունիսի 30:

վեստական ստեղծագործություններ, այլև իր օրերի երիտասարդ հեղինակների տաղանդավոր գործերին: Այսպես, Թեոդիկի տարեցույցներում առաջին ան-
սամ հրատարակվել են դարասկզբի արևմտահայ ականավոր բանաստեղծնե-
րի ու արձակագիրների ստեղծագործությունները, ինչպես նաև արևելահայ և
սփյուռքահայ մտավորականների գրչին պատկանող առանձին գործեր: Հայ
ստեղծագործ մտքի այսպիսի համախմբումը չափազանց կարևոր նշանակու-
թյուն ունեւր: Պատահական չէ, որ դեռևս 1910 թ. Զատիկ խանդավառ Քրես-
տից ողջունում էր Թեոդիկին այն առթիւ, որ նրա տարեցույցներում
«գեթ գրական ուժեր տարին մեկ անգամ կխմբվին դրոշակի մը շուրջը»⁷:
Թեոդիկ ամուսինները անձնական լայն գրագրություն ունեին գավառի և ար-
տասահմանի հայ հասարակական գործիչների ու հեղինակների հետ, որոնց
հորդորում էին ավելի ակտիվորեն գործել հանուն հայ ազգային և մշակութա-
յին կյանքի վերելքի: Հայ մտավորականներից ու ազգային հասարակական
գործիչներից շատ-շատերի կենսագրականներն ու պատկերներն են հրապա-
րակվել «Ամենուն տարեցույց»-ում, անկախ նրանց քաղաքական պատկանե-
լությունից: Հայագիտության հետ աղերս ունեցող այս ամեն նյութերի հա-
խուռն ամփոփումը տարեցույցի հատորներում թերևս սովորել Թեոդիկի հրա-
տարակությունների մարտական նպատակասլացությունը հայ ժողովրդի ազ-
գային-ազատագրական պայքարի պայմաններում, եթե նկատի չառնենք նրա
հրատարակության հանրագիտարանային առանձնահատկությունը և այն մեծ,
լուսավորական նշանակությունը, որ «Ամենուն տարեցույց»-ները կատարում
էին հայ ընթերցողի ազգային ինքնագիտակցման և հայ ազատագրական մտքի
համախմբման գործում: Առանց ազգային որևէ կուսակցության պատկա-
նելու, Թեոդիկը, ինչպես ինքն է վկայում, հետամուտ էր հայ ազգային քաղա-
քական կյանքի ակտիվացման: «Ամենուն տարեցույց»-ի առաջին տարիների
հատորներում արտահայտվել են բուրժուական սահմանադրության և «քաղա-
քակիրթ Եվրոպայի» «քրիստոնյա, անշահախնդիր» օգնության պատրանքներ,
որոնք հենվելով Համիդյան արյունալի ռեժիմի քննադատության վրա՝ այդ տա-
րիներին տիրապետող էին արևմտահայ հասարակության բավական լայն
շրջաններում: Սակայն ի տես հայ ժողովրդի նոր հարստահարություններին
ու անլուր կոտորածներին արդեն 1908 թ. երիտթուրքերի կողմից հռչակված
սահմանադրության օրոք, Թեոդիկը առաջիններից մեկն էր, որ ազատվեց այդ
պատրանքներից, մերկացնելու համար Թուրքիայում տիրող ռեժիմը, ինչպես
նաև Եվրոպական կապիտալիզմի գաղութատիրական, աշխարհաբաժան և ժո-
ղովուրդների բնաջնջման քաղաքականությունը:

Պատահական չէ, որ երբ երիտթուրքական ռեակցիոն իշխանությունները
եզտվելով համաշխարհային առաջին պատերազմի թոհուրոհից՝ գործի անցան
մեկընդմիշտ բնաջնջելու իրենց տիրապետության տակ գտնվող և մշտապես
ազգային անկախության ձգտող հայությանը և վճռեցին նախապես ազատ-
վել նրա մտավորականությունից, աքսորի ու մահվան ցուցակներում առա-
ջիններից մեկը Թեոդիկի անունն էր:

Ով վրեկեց նուաճ մամուլատուից

1915 թ. ապրիլին Թեոդիկը կանչվեց թուրքական ռազմական ատյան,
մեղադրվելով «պետական դավաճանության» մեջ: Դա մի քանի օր առաջ էր

7 Տե՛ս «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1910 (7 տարի), էջ 6:

հայ մտավորականների՝ 1915 թ. ապրիլի 24-ի գիշերվա համընդհանուր ձերբակալումից:

«Նայիր, որ համարձակ խոսիս, չծոխս, չքծնես բնավ անոնց առջև, պատասխանես ուղղված հարցումներուն միայն և ըսես անվեհեր, ինչ որ տուն կուտա քեզի բանականությունը, ինչ որ թե կուտա միտքիդ բռնաբարված իրավունքդ», ասաց անվանի գրող, հրապարակախոս և իրավագետ Գրիգոր Զոհրապր Թեոդիկին, վերջինիս դատավարության նախօրյակին⁸։ Երբ բաղմաթիվ քաջքշուկներից ու հարցաքննություններից հետո եկավ դատավարության օրը, տեղի ունեցավ մի այլ ուշադրավ դեպք։ Թուրքական ռազմական դատարանի առջև «Ամենուն տարեցույց»-ների որոշ «դավաճան» հատվածներ թարգմանելու համար հրավիրված Սուլեթթին և Մեհմեդ Սուրեյան, առանց տարեցույցի հեղինակին ճանաչելու, հայ մտավորականի ճակատագիրը թեթևացնելու դիտավորությամբ, հապավեցին առավել վտանգավոր պարբերություններու Ատյանի վճիռը՝ 5 տարվա ազատազրկում, կրկին վերանայիլ տվեց «Ամենուն տարեցույց»-ների 1914—1915 թթ. հրատարակիչ Մկրտիչ Հովակիմյանի անձնվեր ելույթը, որը Թեոդիկին ներկայացրեց իբրև ալնիվ և օրինապահ քաղաքացու, բայց այդ պաշտպանությունը թանկ նստեց իրեն՝ Հովակիմյանին, Թեոդիկի հետ միասին նրան ևս բերելով մեկ տարվա բանտարկություն։

1915 թ. ապրիլից մինչև 1916 թ. մարտը Թեոդիկը Կ. Պոլսի կենտրոնական բանտում ականատես եղավ ահավոր տեսարանների։ Բանտի ներքին դժնի կյանքից բացի, պատուհանների երկաթացանցից այն կողմ նա տեսավ արևմտահայ ողջ ծաղիկ մտավորականության ձերբակալումը Թալեաթի սաղրանքով և կենտրոնական բանտի բակից իր սիրելիների աքսորի ու բռնամահի սկիզբը։ Ծայր հուսահատության մեջ Թեոդիկի հավատարիմն ու դինակիցը Արշակունին էր, որ հաղթահարելով ամեն արգելք, բանտ՝ Թեոդիկի համար գրքեր էր բերում, մղում էր նրան աշխատելու, գրելու հուշեր, բանասիրական պրագմատիկներ կատարելու, մյուս բանտարկյալների հետ հաղորդակցվելով, ճշտելու ու լրացնելու Մեծ և Պոլսի ու հայ ժողովրդի մասսայական տարագրության մանրամասները, վիճակագրությունը։ Սկիզբում էր Թեոդիկին այն ծանր գիտակցության ճնշումից, որ բանտի հարկադիր աշխատանքով նա նույնիսկ ստիպված էր մասնակցել մահվան ու կախաղանի գործիքների պատրաստմանը, որ բաժին էին դառնում հայ աղգային ազատագրության գործի հերոս ղեկավարներին։

Մեկ տարի անց, բանտից հենց նոր ազատված, փողոցում նրան կրկին ձերբակալեցին, ցույց տվին իր համար դեպի Տեր-Զորի մահվան ճամբարը աքսորի վաղուց պատրաստված փաստաթղթերը և հենց նույն ժամին, հայ տարագիրների մի պատահական խմբի հետ ճամփեցին դեպի անհայտ հեռուները։ Գրպանում մի դուրուշ անգամ շունն ու Սովամահությունից նրան փրկեց այն, որ տարվա տաք եղանակ էր, ճամփեղբերին առատ աճել էին վայրի տանձն ու հատապտուղը։ Թեոդիկը ամեն օր ականատես էր լինում ոճրագործությունների ու մահվան դարհուրելի տեսարանների, որ քառապատիկ ծանր էր ապրում դեղագետի իր սրտովն ու մտքովը։ Միևնույն շղթայով իր հետ քայլողները գիտեին նրան իբրև «տարեցույցին Թեոդիկը»։ Նրանցից շատերն ընկան ճանապարհներին, շատերին թույլ չտրվեց թաղել, Թեոդիկը դեռ քարշ

⁸ Տե՛ս «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1916—1920 թթ. (Ժ—ԺԴ տարի), էջ 54—58։

էր տալիս առանց այն էլ բանտի խոնավութիւնից հողացալով տառապող ոտքերը: Մի անգամ գրպանի ժամացույցի համար քիչ մնաց իր կյանքը զոհ տար թուրք ասկյարի դաշույնին, որ հազիվ հնարաւոր եղաւ կանխել: Սապանջայում գինվորական հայ բժիշկ ղոկտոր Շահինին հաջողվեց իրավունք ստանալ Թեոդիկին մի քանի օր իր հարկի տակ հյուր ունենալու: Թեոդիկի ուժերը մի փոքր վերականգնվեցին, այստեղից հնարաւոր եղաւ հեռագրեր և նամակ ուղարկել իր հարազատներին ու բարեկամներին, որոնք նրան փրկելու հույսով դիմեցին կառավարութեան, փախուստի ծրագիր կազմեցին նրա համար, որը սակայն մերժեց ևրախտագետ Թեոդիկը բժշկի և նրա ընտանիքի կյանքը չվտանգելու համար: Իսկ կառավարութիւնից Սապանջայի ոստիկանատուն շուտափութիւն կարգով ևկալ հետևյալ հրամանը. «ոչ մի պատճառով չկասեցնել Թեոդիկի ճանապարհը դեպի Տեր-Ջոր: Նրան Միջագետք հասցնելուն պիտ հեռագրել կառավարութեանը»:

Դոկտոր Շահինը կարողացաւ Թեոդիկի արքորի որոշ ճանապարհը գնացրով շարունակելու իրավունք և տոմսակ ձեռք բերել: Թեոդիկը մինչև Բյուզանդիոն մեկնեց այն գնացքով, որով միաժամանակ, խիստ հսկողութեան ստիկ, արքորւում էր Պոլսի հայոց պատրիարքը:

Բյուզանդիոնից այն կողմ, ուր գնացք այլևս չէր աշխատում, հայոց արքորի արարողութիւնը կորցրեց օրինականութեան վերջին երևույթը: «Ուղեկցող» պարթիկներէից հայերի բզկտված թափորն ընդունում էին նոր ոստիկաններ, որոնց առաջին գործը մարդկանց վերջին ցնցոտիները թալանելը եղաւ: Այս իրարանցման մեջ էր ահա, որ Թեոդիկն ու շղթայի իր պուզընկերը հաջողեցրին փախչել: Շուտով բաժանվեցին, բաղաբում Թեոդիկը բռնվեց: Տեր-Ջոր տանող վերջին կայանում հիվանդանոցի հայ բժիշկը հաջողեցրեց Թեոդիկին երեք օր պահելու արտոնագիր տալ, ապա նա հանդիպեց Պերպերյան վարժարանի իր նախկին դասընկերներից մեկին, որը Ամելե թապուրիի գինվոր էր, սա նրան աշխատանքի տեղավորեց ախոռում: Թեոդիկն անտեղյակ էր, որ իրեն բոլորովին անծանոթ մի խումբ ազգակիցներ, վտանգելով սեփական կյանքը, մշակել էին իր փախուստի նոր ծրագիր, որը հաջողվեց իրականացնել:

Դա խիզախ հայրենասերների մի խումբ էր, որ կազմվել էր կոտորածներից խույս տված հայ երիտասարդներից, ականցի Գարեգին Մարգարյանի ղեկավարութեամբ: Իրրև հյուսնական ջոկատ նրանք աշխատանքի էին մտել Տավրոս-Ամանոս երկաթգծի շինարարութիւնում, բնակվում էին բանվորական վրաններից մեկի տակ: Քչերին էր հաւտնի, թե գիշերները հաճախ ուր էին անհետանում «հյուսն»-երը և թե ինչ թանկագին ավարով էին վերադառնում: Քչերը գիտեին, թե հյուսնապետ Դարեգին Չավուշը Կ. Պոլսի Գեղարվեստից վարժարանի շրջանավարտ և Թուրքիայի ծովային նախարարութեան նախկին շնորհալի ճարտարապետն էր, որ 1915 թ. սեպտեմբերին ձերբակալվելով, 200 այլ հայ տարագիրների հետ միասին թշնմել էր դեպի Տեր-Ջոր: Գարեգին Չավուշի ջոկատը իր առջև խնդիր էր դրել Գարա Փունար-Պողանթի ճանապարհի վրա թուրք ոստիկաններից խլել և փախցնելով յաթաղանից փրկել հայ մտավորականներին: Նրանք արդեն քանիսի ազատարարն էին եղել: Տեղեկացել էին և հետևել նաև Թեոդիկի ճանապարհին: Այլ հենց ախոռում էլ նրան հանդիպեց աղանացի Լևոնը, ցույց տվեց պատրաստի գնացքի տոմսակները, և ապա, պայմանաւորված ժամին, երկուսով բարձրացան ռուսական գերիներ փոխադրող գնացքը: Պայմանաւորված տեղում Լևոնին փոխարինեց զեյթուն-

ցի Խակենդերը, որի հետ միասին, Թեոդիկը Գառա Փունար կայարանին շհասած, դուրս ցատկեցին զնացքից, բարբրախտաբար հաչող՝ Պելեմետիկում հոգնած և տանջահար ուղևորներին զիմալորեցին և սլատսլարեցին ալատաբար խմրի մյուս անդամները։ Աղանացի բժիշկ Բենիամին Բոյաճյան, բիեկյանցի Արմենակ, կովկասահայ գերիներ Ալեքսի (Մանուկ), Հովհաննես Մուրադյան և ուրիշներ։ Հաջողվեց Թեոդիկի անունը իբրև Վահագն Նեկտարյան սպորդեցնել թուրք և զերման ռազմական հրամանատարության հատուկ սլատվերով իրականացվող Տավրոսի թունելի շինարարության բանվորական մատյաններից մեկը, ուր հուլնի, տաճիկի և ալլազդու անվան տակ աշխատում էին անյուր կոտորածներից խույս տված հաղարավոր հայեր։ Չսկսեք է ենթադրել, թե զերմանացի ղեկավարությունն անտեղյակ էր այդ փաստին։ Օսմանյան իշխանությունների և անձամբ Թալևաթ փաշայի խիստ հրամանին՝ հեռացնել հայերին շինարարությունից և նրանց քշել Միջագետքի անսպասելիք, զերմանացիք սլատասխանեցին, թև զրանից կտուժի թունելի շինարարությունը։ Գերմանացիներին սլարզապես սկսեք էր օգտագործել տարագիրների վերջին ուժերը։ Դա տաժանակիր աշխատանք էր։ Ամեն օր, կարբիդի լամպերով, լծակներով ու բրիչներով հայերը մտնում էին թունելախորշ անզլիացի, ռուս, հույն, ռումին և վրացի գերիների հետ միասին, և օրվա բնիացքում նրանցից շատերին դուրս էին բերում խեղանդամված, քանի որ աշխատանքի սլահհոփության տարրական կանոնների մասին չէր հոգացվում։

Թուրքիայի սլատությունը սլատերազմում, ռազմագերիների հետ միասին հնարավորություն բնձնեց տուն վերադառնալու նաև լեզոնի տարիներին յաթաղանից հրաչքով վրկված սակավաթիվ հայերի, որոնք ալլես ուրիշ կերպ չէին կոչվում, քան վերապրողների՝ Վերանալ, աղատվել հոգևաշ հիշողություններից, չվերապրել սարսափելի ղեկերը՝ հնարավոր չէր։ Վերապրողներից շատերն ի վիճակի չէին ալլես գեթ մի օր, մի ժամ մնալ Թուրքիայի երկնքի տակ, շնչել այդ օդը։

Մի վերապրողի քն՝ մի ամբողջ ժողովրդի ուլիսական

Թեոդիկը վերադարձավ Կ. Պոլիս։ Գտավ այդ սարսափելի տարիներին բոլորովին հլուծված ու քայքայված առողջությամբ Արշակունցուն։ Սեմենքս էլ զոհեր ենք» թվում է մխիթարում էր Արշակունցին իրեն ու մտերիմներին։ Բժիշկները խորհուրդ էին տալիս նրա կյանքը մի քանի տարով երկարաձգելու համար տեղավորել Շվեյցարիայի լեռնային առողջարաններից մեկն ու մեկում, մինչ իրենք՝ Թեոդիկները, ալլուստի սուղ միջոցներից զրդված ստիպված էին Բերայի բնակարանը փոխել մի ավելի վատ սենյակով։ Այնուամենայնիվ Թեոդիկն իր մեջ ուժ էր գտնում ասելու՝ Դուրյան արքեպիսկոպոսին. «Ազգը չէ մեռած և անհնար է որ մեռնի»։

Նա կրկին անցավ ծառայության, կրկին ձևումում ինքնալ իր տարեցույցների ընդհատված հրատարակությանը, նկատի ունենալով զրանց կարևորությունն իր ժողովրդի համար իբրև բարության զորավիդ։ 1916—1920 թթ. սեմենուն տարեցույցներ ժ—Ժ տարիների միացյալ հատորում նա գրեց քաշալերող, իմաստուն տողեր. «Ազգերնիս ալլեր է միշտ սլողսլատի սկես

9 Տե՛ս «Ամենուն տարեցույցը», Պոլիս, 1916—1920 թթ. (Ժ—Ժ տարի), էջ 207։

տոկուն իր կամքով, խարիսխի սկսած ամուր իր հավատքով և արուսյակի սկսած փայլուն իր հույսով, որոնցմով քալիք է և՛ն դարերու պատուհաններու մեջին, իյնալով, իլլիլով, իր դավկներուն բռնամահովը հաճախ մահը խայնեցնելով, սղալոր, բայց հար լավատես, ալեոր, բայց հար աշխուժ, ոտքերուն կուլան և անկախությանը կայան որդենիլով շարունակ...»¹⁰:

Նույն թվականին Քեոդիկը գրեց և հրատարակեց «Հուշարձան ասորի 11-ի»-ն՝ նվիրված իր զոհված մտավորական ընկերներին: Սինչև 1919 թ. վերջը Հայոց պատերազմի հանձնարարությունները գրեց և ռազատոր «Գողգոթա...»-ն:

Ցանկանալով իրենով լցնել հայ ժողովրդի սրտում ու կյանքում փորված ամենհի անդունդը, վերապրման ամայի տարիները կամքով մինչև զեռնյան մտավոր ծագունը դաշտի հետ, Քեոդիկը «Լեմնուն տարեցույց»-ներում էջեր էր նվիրում զոհված մտավորականներին ու բանաստեղծներին, լրագրողներին ու արվեստի գործիչներին, նրանց անտիպ ստեղծագործություններին, նամակներին ու լուսանկարներին. ղեկավարությամբ փնտրված ու ձեռք բերված, խունացած ու կիսայրված վավերագրեր, որոնք տպագրելի էր դարձնում տպագրական գործի անդուգական վարպետ Մ. Յուսուֆյանի օգնությամբ: Հենրից՝ սրբացվածներից բացի Քեոդիկը գուրգուրում էր նաև վերապրող հաղվագյուտ հայ հեղինակներին, նրանց լուրորին կրկին գրական ու ստեղծագործական, հայ մշակութային օջախի շուրջ համախմբելու համար:

4. Պոլսում 20-ական թվականներին Քեոդիկն աշխատում էր «Ժամանակ», «Ժողովուրդ» և «Վերջին լուր» պարբերականների խմբագրատներում՝ Նրվանդ Օսյանի, Հովհաննես Ասպետի հետ միասին: Պոլսահայ կյանքը կարծես թե փորձում էր վերականգնել քաղաքական ու հասարակական կյանքի իր նախկին հունը, սակայն... թուրքերի կողմից հայերի և հույների նկատմամբ բարբարոսական հալածանքի նոր փաստերը վերջնական հարված հասցրին արևմտահայ հասարակական կյանքի վարդապետներ:

Քեոդիկը, որ կորցրել էր կյանքում արդեն շատ բան, 1923 թ. մայրամուտին կորցրեց նաև հայրենիքը: Իգմիրի նոր եղևունը և Լողանում կնքված դաշնագրությունը պոլսահայության համար նորանոր աղետների ու հետապնդումների դուռ բացեցին: Սկսվեցին Քեոդիկի թափառումները օտարություն մեջ, անաշխատանք և անօթեան: Հաջորդվեց կարճ ժամանակով դաստիարակի պաշտոնը զտնել Կորֆուի ամերիկյան որբանոցում, ուր աշխատում էին նաև Լեռն. Ալպոյումյանը, Հ. Ասպետը, պրոֆ. Ս. Խաչատրյանը, Ն. Պեշիկթաշլյանը, Լ. Թուրունջյանը և ուրիշ հայ մտավորականներ:

«Վաղվան մեր հայրենիքը սուրբ պահեցեր, լայնացուցեր անոր սահմանները բայց ինչով անսպասար քաղաքակրթության ճանապարհին: ...Վաղը դուրս թյուն պիտի շունենա հոն թշվառությունը, եթե տղիտություն զեռ մաքառեր, եթե մոլությունը զեռ պայքարիք և միություն զաղափարը գործնականապես ապացուցեր: Այս կպահանջե ձեռն Հայրենիքը, և զայն պարտիք զիտնալ»¹¹: Այս խոսքերով էր դիմում Քեոդիկը օտար ափին ու օտար շեմին կոթնած հայ որբերին, որոնք օր-օրին ապաղղայնացման վտանգին էին տրված, քանի որ նրանց ուսումնական ծրագրերից հանվում էին մայրենի լեզուն, աղղային գրա-

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Տե՛ս Նրևան, ԳԱԹ, Սփյուռքահայ գրողների արխիվային հավաքածու: Քեոդիկի բաժին: Քեոդիկի ճառը Կորֆուի Աքիլյան որբանոց-պալատան մեջ, 1923 թ. փետրվարի 15:

կանություն ու պատմության առարկաները, քանի որ կրթվելու փոխարեն ցերեկն ամբողջ ոտնամաններ էին կարում իբրև դրսի ապսպրանք, կամ քշվում Սիրա կղզին գրաստունակ աշխատանքի։ Ամերիկացիները հայ ուսուցիչներին դիտում էին իբրև մակաբույծներ ու մուրաղկաններ, ոմանց, այդ թվում նաև Քեոդիկի թղթակցությունների վրա գրաքննություն էին հաստատել։ Որքանոցում տիրող այս վիճակի և հայ որբերի շահագործման դեմ Քեոդիկի ընդվզումը ամերիկացի «բարեբարների» կողմից դիտվեց իբրև «հայկական... ապերախություն» և նրան զրկեցին աշխատանքից։ Մյուս մտավորականները նույնպես արդեն հեռացել էին, ով որտեղ կարող էր, Ալպոյաճյանը մեկնել էր Եգիպտոս։ Քեոդիկը վարանում էր. մեկնել Երուսաղեմ թե... ուր։ Միևնույն է, բոլոր ճամփաներն էլ նրա համար օտար և անցանկալի էին, մաշում էր հայրենիքի կարոտը։ Այս օտար ու ամայի ճանապարհների վրա նրա հետ պատահեց մի նոր դժբախտ դիպված, որի հետևանքով մի քանի ամիս հաշմված վիճակում մնաց հունական մի հիվանդանոցում։ Եվրոպայում բնակող իր մտավորական բարեկամների և մասնավորապես Արշակ Սաֆրաստյանի միջոցով նա աշխատանք գտավ հունական մի այլ որբանոցում, ապա տեղափոխվեց Կիպրոս՝ Մելքոնյան Վարժարան, իբրև հաշմետար։ Այս բոլոր տարիներին, պանդխտության մեջ, անոթի թե անօթեան, Քեոդիկը շարունակում էր հայագիտական արժեքավոր նյութի հավաքն ու իր «Ամենուն տարեցույց»-ների պարբերական հրատարակումը Եվրոպայի տարբեր քաղաքների հայկական տպարաններում¹²։ Իր գործի հանդեպ նա երբեմն հանդիպում էր նաև հեղնանքի ու անտարբերության։ Այս առթիվ Քեոդիկը գրում էր. «Ինչ մահագին իմաստ ունի արգասավորումը հայ մտավորականին բախտին վերաբերմունքովը հուսա-հունա նետված»¹³։ Այս տարիներին Քեոդիկի հայացքն ուղղված էր դեպի հեռավոր սովետական հայրենիք։ Նա գրում էր. «...և. Հայաստանի վարիչք ակնհայտնի մտավորականաց և արվեստագետներու ցկյանս թոշակ կսահմանին...»¹⁴։ Սկսած 1921 թ. «Ամենուն տարեցույց»-ներում ամեն տարի հաջորդաբար տեղ է տրվել Սովետական Հայաստանի առօրյային, նրա տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի առաջընթացի լուսաբանմանը։

¹² Քեոդիկի պանդխտ կյանքն արտասահմանում և «Ամենուն տարեցույց»-ների տարբեր տարիները տարբեր քաղաքներում հրատարակվելու փաստը տեղիք է տվել մատենագիտական սխալի շ. Պետրոսյանի կողմից (տե՛ս «Հայ պարբերական մամուլի ընթերցողաֆիա», Երևան, 1957, էջ 87), որը նշում է. թե «Ամենուն տարեցույցները» լույս են տեսել Կ. Պոլսում՝ 1907—1920 թթ., Վենետիկում՝ 1920—1926 թթ., Փարիզում՝ 1927—1928 թթ.։

Ցավոք, շփոթմունք կա նաև Ն. Գասպյանի կողմից կաղմված Հայ պարբերական մամուլի ցուցակում (տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1961, № 3—4, էջ 310), ուր դիտվում է, թե «Ամենուն տարեցույցը» 1924 թ. լույս է տեսել Վիեննայում։

Իրականում պատկերն այսպիսին է՝ Քեոդիկ—«Ամենուն տարեցույցը»՝

1907 թ. (Ա. տարի)—1913 թ. (է. տարի)— Կ. Պոլիս, տպ.՝ Վ. և Հ. Տեր-Ներսիսյան

1914 թ. (Ը. տարի)— 1923 թ. (Ժէ. տարի)— Կ. Պոլիս, տպ.՝ Մ. Հովակիմյան

1924 թ. (ԺԸ. տարի)— Փարիզ, տպ.՝ Յ. Բ. Թիրաքյան

1925 թ. (ԺԹ. տարի)— Վիեննա, տպ.՝ Մխիթարյան հարց

1926 թ. (Ի. տարի)— Վենետիկ, ս. Ղազար, տպ.՝ «Միություն»

1927 թ. (ԻԱ. տարի)— 1929 թ. (ԻԳ. տարի)— Փարիզ, տպ.՝ «Մասիս»

¹³ Տե՛ս ԳԱԹ, Վ. Մալեղյանի արխիվ, թղթապանակ № 253, վավերագիր 11, Քեոդիկի նամակը Վ. Մ.-ին, 1926 թ. մարտի 17 թվակիր։

¹⁴ Տե՛ս ԳԱԹ, Ա. Սաֆրաստյանի արխիվ, նամակներ, վավ. № 105, Քեոդիկի նամակը Ա. Ս.-ին, 1925 թ., 19 հունվարի։

Թեոդիկն իր տարեցույցի շուրջ համախմբել էր նաև թղթակիցներ Սովետական Հայաստանից՝ Ա. Երեմյան և ուրիշներ:

1926 թ. «Ամենույն տարեցույց»-ների 20-ամյա հոբելյանի առթիվ շնորհավորելով Թեոդիկին իր բազմամյա և շնորհակալ գործունեության համար, Սովետական Հայաստանից նրան հղված ողջույնի ուղերձում ասվում էր, որ դա «դրական ֆրոնտում» հերոսական պայքարով և անձնազոհությամբ ձեռք բերված «երկաթյա հաղթանակ» է¹⁵:

Սփյուռքում շարունակվում էր Թեոդիկի թափառական ու անդաստան վիճակն իրրև «անմատչյան ալպանացի», զրկված նաև իր հրաշալի գրքերից ու մատչաններից: Կիպրոսում նա ապրում էր քաղաքներից հեռու, ամայի դաշտի մեջ, ուր «ուղտսփուշն անդամ բուսած չէր և ուր նա ամիսներով ճանճ անգամ տեսած չուներ»: «Օրացույցի բոլոր Անտոններն ու Խոտաճարակները նվազ տառապած են դարեր առաջ, քան ճգնակենցաղ կրթության դասապարտյալս», — գրում էր նա Անայիսին՝ Բուխարեստ¹⁶, Իսկ որդուն գրում էր. «Պաշտոնես բնավ զոհ չեմ, աղտոտ թիրբեր շրջապատված ըլլալով: Արդեն կյանքը կյանք չէ հոս...սնունդս գեշ, ...արգելք քաղաքացւոց հետ տեսակցելի. ճգնավորն ինն երջանիկ է»¹⁷: Սա դեռ ամբողջը չէր: Քչերին էր հայտնի, որ այդտեղ Կիպրոսում Թեոդիկի երեսին հանդգնում էին շարտել. «Հոս մտավորականներու անկեղանոց չէ»: Այս պայմաններում է ահա, որ աշխատում էր Թեոդիկը և այս պայմաններում է, որ ստեղծվում էին մեկը մյուսին գերազանցող և մեկը մյուսից արժեքավոր «Ամենունները»:

«Հրատարակչական գործն հասկցող մը միայն կրնա արժանապես ըմբռնել, թե ինչ կամք ու ջանք պետք է այդպիսի գործ մը գլուխ հանելու համար, — ձեռք վերցնելով 1926 թ. Վենետիկում լույս տեսած «Ամենուն տարեցույց»-ի հորելյանական, ավելի քան 700 էջանոց հատորը, — ասել է Թեոդիկի տարեցույցների բազմաթիվ տարիների հրատարակիչ Հրաչյա Տեր-Ներսիսյանը: — Թեոդիկ ըլլալու է մարդ ...սապես գործ մը հրապարակ հանելու համար, այն էլ սա պանդուխտ ու միայնակ վիճակին մեջ»¹⁸:

Փարիզի մի խումբ մտավորականներ՝ Հրաչյա Տեր-Ներսիսյանի գլխավորությամբ օգնեցին Թեոդիկին Կիպրոսից Փարիզ տեղափոխվելու, նրան մի խուց հատկացրին Փարիզի «Մասիս» տպարանի շենքում, ուր հայերեն մի քանի պարբերականների խմբագրատներն էին տեղավորված նույնպես, և որտեղ Թեոդիկն իրեն անսահման երջանիկ էր զգում փարիզահայ մտավորականների հետ ամենօրյա հանդիպումներով: Նրբ բարեկամները նրան առաջարկում էին իր անլույս ու քարհատակ խուցը փոխարինել մի ավելի հարմար բնակարանով, ասում էր, թե չի ուզում բաժանվել իրեն այնքան սիրելի արձնի և տպագրական տառերի բուրմունքից:

Ի դեպ, դա առաջին տարին էր, որ նա լքած կողմնակի որևէ աշխատանք կամ ծառայություն, հոգևին փարել էր իր սիրած գործին՝ «Ամենուն տարեցույց»-ների 1928 և 1929 թվականների հատորների պատրաստմանը, որոնք միաժամանակ վերջինները պիտի լինեին իր կյանքում: Աշխատում էր լարված,

15 ՏՃՍ «Ամենուն տարեցույց», Վենետիկ, 1926 (Ի. տարի), էջ 170:

16 ՏՃՍ ԳԱԹ, Անայիսի արխիվ, Թեոդիկի նամակը Ա.-ին, 1926, մայիս:

17 ՏՃՍ Իրևանի Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, Վավերագիր 66, գործ Մ 806:

Վ. Թեոդիկի նամակը Ա. Ալպոյաճյանին, 1928 թվակիր:

18 ՏՃՍ «Ամենուն տարեցույցը», Փարիզ, 1927 (ԻԱ տարի), էջ 6:

առանց հանգստի, միաժամանակ սարսափելի կարիքի մեջ, մերժում էր բարեկամների անդամ ճաշի հրավերները, հասկանալով, որ նույնով փոխհատուցել է վիճակի չէ։ Աշխուժանում էր և դառնում նախկին տարիների Թեոդիկը, հրր վերևում՝ Հրաշյայի սենյակում Բաշալյանի ու մյուսների հետ տաք վեճի էր բռնվում հայերեն որևէ բառի, դարձվածքի կամ բանասիրական որևէ խնդրի շուրջ։ Սոսկումով էր գիտակցում սփյուռքի ահալոր այլասերող պայմանները, հայ մշակույթի գործիչների ինքնասուպանությունն ու անապագայնացումը։ Իր անձնական օրինակով, իր գործով ու խոսքով Թեոդիկը միշտ վառ էր պահում հայ գրական ու մտավորական ջահը և այդպես էր սովորեցնում նաև հայ մտավորականների նոր սերնդին։

«Ինք մեզի կհիշեցնե՞նք այն վանականները, որոնք մենաստաններու խորը միշտ վառ կպահին հայ գրականության ճրագը, ամեն օր անոր վրա ավելցրնելով ահագին դժվարություններ ձեռք բերված յուղը», — այդ օրերին գրում էր Թեոդիկի մասին Լևոն Բաշալյանը¹⁹։

Թեոդիկը աչքերը փակեց 1928 թ. մայիսի 24-ին, աշխատանքի պահին, 1929 թ. իր «Տարեցույցի» համակ հոծ ու մանրատառ 15-րդ ֆորման պատրաստելիս։ 1929 թ. «Ամենուն տարեցույցը» ավարտվեց և լույս տեսավ իր կամքի համաձայն ֆրանսահայ բանաստեղծ և մտավորական Նշան Պեշկեթյանի ձեռամբ։

Ուտեղ է նրա հողակույտը և ուտեղ՝ ժառանգությունը

Թեոդիկին թաղեցին հանգանակություններ, Փարիզի պանթեոնում։ Նրա մահակառքի ետևից փարիզահայ մտավորականների ստվար խումբը քայլեց, և նրանց վերջին հրաժեշտին ասվեցին երախտալից դամբանականներ։ Ֆրանսիա ապավինած հայ վերապրող մտավորականների հին սերունդը սգաց իր տարիների խաչքնկերոջը, նոր սերունդը՝ ազգային ու մշակութային իրենց նորանոր ձեռնարկների խրախուսողին ու հույանավորին։ Մահախոսականները համեմված էին արցունքով, որ ոչ միայն Թեոդիկի, այլև սփյուռքահայ բազմաթիվ գործիչների դառը ճակատագրին էր վերաբերում։ Սփյուռքահայ մամուլը Թեոդիկի մահը գրական տարվա ամենաակնառու դեպքը դիտեց, սակայն դժվար էր համակերպվել Թեոդիկին կորցնելու մտքի հետ, քանի որ նրանով ընդհատվում էր ազգային ու հասարակական կարևոր նշանակություն ունեցող գործ։ «Ամենուն տարեցույց»-ների կամ նրանց արժանապես փոխարինող հայ հանրագիտարանային տարեգրքերի հետագա հրատարակությունը դարձավ հայ մշակութային կյանքի առաջնահերթ և կարևորագույն խնդիրներից մեկը, որը սակայն երկար տարիներ իրականացնել հնարավոր չեղավ։

Հայտնի է, որ Թեոդիկի անձնական գրադարանը, որ իր մահից հետո որդու մոտ՝ Ամերիկայում էր գտնվում, հետագայում զնվեց և փոխադրվեց հայրենիք։ Վստահ չենք, թե դա Թեոդիկի ունեցած ողջ գրականությունն էր. հավանաբար, նրանից հնատիպ ու հազվագյուտ առանձին գրքեր արդեն վաճառվել էին։ Սակայն, հարցը հիմա բնավ այդ չէ, այլ այն խնդիրը, թե որքանով է մնացածը հասել ըստ պատկանելույն։

Իր գրադարանը հայ ժողովրդին կտակելու մասին առաջին ակնարկությունները Թեոդիկի կողմից եղել են դեռևս 1910 թ., երբ նա գրում էր Ա. Չո-

¹⁹ Տե՛ս «Ամենուն տարեցույցը», Փարիզ, 1929 (ԻԳ տարի), էջ 519։

պանյանին, հետազայում իր գրադարանը 4. Պոլսի Ղալաթիայի մատենադարանին կտակելու մասին²⁰։ Սակայն պիտի դիտել, որ հետագա պատմական իրադարձությունները անհնար դարձրին նրա՝ իր ամենաթանկագին ունեցվածքը հարազատ ժողովրդին նվիրաբերելու ցանկության իրադրոժումը։ Հետագայում նա կրկին անդրադարձավ այդ հարցին, գրելով Չոպանյանին. «Այժմեն մտադրված եմ նվիրել 7500 կտոր դիրքերս ու հանդեսներուս հավաքածուները Ազգ. Մատենադարանին, որ ի Հայաստան կազմելի... անոր ղեկավարության կոչվելու անհուն անշանքով մը։ Հայաստանի մեջ ըսածես ավելի հարմար պաշտոն ինձի համար չեմ տեսներ ես։ Ու թող ազգակիցներս տեսնին, թե իր անհատական ճղճիմ ուժերովը այդչափ հատորի տիրացող, դանոնք բոլոր կազմած պահող Թեոդիկ ինչ պատկառելի թիվի մը պիտի կրնա հասցնել մայր-մատենադարան մը, որ ազգինն է։ ...դիտեմ թե նմանօրինակ պաշտոնի մը կոչվելու առիթը լավ պիտի ունենամ գրչի աշխատությանս ալ լծվելու»²¹։

Ուրեմն ինչու Թեոդիկի ցանկությունը ժամանակին չկատարվեց և նրան հնարավորություն չարվեց բնականից հետ մեկտեղ Արևելյան Հայաստան տեղափոխվելու։ Այդ գործին շօգնեց նույնիսկ նկարիչ Փանոս Թերլեմեզյանի միջնորդությունը։ Որովհետև այդ տարիներին Արևելյան Հայաստանում տիրող դաշնակցական իշխանություններին հայտնի էր, որ Թեոդիկը դատապարտում էր իրենց քաղաքական և պրակտիկ ղեկավարության սկզբունքները. «Ազգին ճակատագրին հետ խաղացող խիլ մը «թիկունքի հերոս»-ներու աղիկամի և աղետալի գործելակերպին այն փուլերը, որոնց մեջ գաղթական և կոլոդ ուժերը ապրեցան չարաչար, անոթի և անօճան, իրենց շարշարանքին գինով պարարտացնելու համար գրպանները սինլքոր ղեկավարներու»²²։

Աշմարիտ հարց է ծագում, ինչու հետագայում Թեոդիկը չներգաղթեց հայրենիք՝ Սովետական Հայաստան։ Մենք ենթադրում ենք, որ նրան դժվար էր բոլորովին կապերը խզել որդուց, որը երկար տարիներ Ամերիկայում ապրելուց և առևտրական մի ուսումնարանում ուսանելուց հետո բավական արդեն օտարացել, դարձել էր իր տարիքի համար չափազանց «լուրջ» ու անտարբեր անգամ հոր նկատմամբ։ Բացի այդ Թեոդիկն ուներ հայապահպանի համար իր գործունեության կարևորության խոր գիտակցությունը։ Պիտի լքե՞ր Թեոդիկը սփյուռքահայ ժողովուրդն ու մշակույթը, որ արևմտահայ ժողովրդի ու մշակույթի հարազատ ծնունդն էր, իր պարզացման հեխհերի մեջ։ Թեոդիկն այն մարդկանցից էր, ովքեր ոտք չեն դնում փրկության նավակը, մինչև չեն փրկում բոլոր վտանգվածներին։

Թեոդիկի ժառանգության մի առավել կարևոր բաժինը. նրա գրական գեղարվեստական ու բանասիրական երկերն են, ցրված մամուլի էջերում, որ գրականագիտական արժեք են ներկայացնում արևմտահայ բնապաշտական և իրապաշտական գրականության պարզացման բնթացքը լուսաբանելու խնդրում։

Առանձին գրքով լույս էր տեսել նրա պատմվածքների միայն մեկ ժողովածու՝ «Կաղանդ», 1912 թ., 4. Պոլիս։ Նույն թվականին Թեոդիկը մտադիր էր հայ ընթերցող հասարակությանը ներկայացնել նաև իր նորավեպերի երկրորդ ժողովածուն «Տաղավար» վերնագրով, որ ինչ-ինչ պատճառներով լույս չտեսավ։

20 Տե՛ս ԳԱԹ, Ա. Չոպանյանի արխիվ, ցուցակ 4, վավերագիր № 2251։

21 Նույն տեղում, վավերագիր № 2258։

22 Նույն տեղում։

1922 թ. նույնպես հիմնավոր մտազրույթյուն կար Կ. Պոլսում հրատարակելու «Պոլիսի հայեվարը», «Տաղավար» և «Սերունսիրտ» վերնագրերով Թեոդիկի նորավեպերի 2 ժողովածու, «Դեգերումներ» պոլսահայ տեսարանների և «Ճանչվոր դեմքեր»՝ արևմտահայ մտավորականների գրական ըննադատական ուրվագծերի ժողովածուները։ Այս մասին նույնիսկ հայտարարություն արվեց, սակայն 20-ական թվականներին օրավուր առող թուրքական ռեակցիան արևմտահայ հասարակական գործունեության դեմ, կանխեց այս շնորհակալ դործը նույնպես։

Թեոդիկի գրական ժառանգությունը հավաքելու և առանձին գրքերի մեջ ամփոփելու խնդիրը դրվել է սփյուռքահայ մտավորականության կողմից, 1928 թ. հետո, սակայն այդ բանն իրականացնելու համար պայմաններ չեն եղել։ Մնում է, որ մեր սերունդը մեկ անգամ ևս հիմնավորապես անդրադառնա այդ կարևոր խնդրին, սակայն թե որտեղ են Թեոդիկի անտիպ երկերը, առայժմ այդ մեղ հայտնի չէ։ Հույսով ենք, որ Թեոդիկի ժառանգության այդ նշանակալից և թանկագին մասը չի կորել կամ ոչնչացել, այլ պահվում է իր հարազատների և մտերիմների մոտ և մի օր կարժանանա ամբողջ հայ ժողովրդի սեփականությունը դառնալու բախտին։